

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՆԻ ՀՐԱԶՅԱՅԻ

**ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԲՆԱԶՆՋՈՒՄԸ ԵՎ ՈՒՆԵԶՐԿՈՒՄԸ
1909-1918 ԹԹ.**

**Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2024

Ատենախոսության թեման հաստատվել է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մարուքյան Արմեն Յուլյակի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Պողոսյան Սամվել Անդրանիկի

պատմական գիտությունների թեկնածու
Անույան Մելինե Վահեի

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2024 թ. սեպտեմբերի 24-ին, ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ. օգոստոսի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է Օսմանյան իշխանությունների կողմից 1909 թ. Ադանայի կոտորածների, ինչպես նաև Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի զանգվածային բնաջնջման և ունեցրկման ընթացքում Ադանայի նահանգի հայության մարդկային ու նյութական կորուստները համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությամբ:

Թուրքական իշխանությունների կողմից 1909 թ. Ադանայի նահանգի հայության թիրախավորումը ոչ թե պատահական, այլ հաշվարկված քայլ էր, որը հետապնդում էր տարբեր նպատակներ: Նահանգի հայ բնակչությանը մեծաթիվ մարդկային կորուստներ պատճառելուց և նրանց տնտեսական առաջընթացը խափանելուց բացի՝ կազմակերպված կոտորածները հարված էին հասցնում նաև Արևմտյան Հայաստանում ու կայսրության այլ վայրերում բնակվող հայերի սոցիալական վիճակին: Հայտնի է, որ Ադանան արտազան աշխատանքի կենտրոն էր և սեզոնային աշխատանքով ապահովում էր բավական թվով հայերի: Ադանայում հայ պանդուխտների վաստակած և հայրենիք ուղարկվող գումարը որոշակի խոչընդոտ էր հանդիսանում թուրքական իշխանությունների կողմից Արևմտյան Հայաստանում հետևողականորեն իրականացվող հայերի հողագրկման և դրանից բխող հայրենագրկման քաղաքականությանը: Կոտորածների և զանգվածային ունեցրկման հետևանքով ոչնչանում էր հենց ադանահայերի տնտեսության հիմնական մասը, ինչն ասպարեզ էր բացում թուրքերի և մյուս մուսուլմանների համար: Բացի այդ, համատարած կողոպուտի հետևանքով հարստանում էին նաև տեղական և կենտրոնական կառավարության պաշտոնյաները, առավել ևս, որ երիտթուրքերը նոր էին հասել իշխանության և ձգտում էին ամրապնդել իրենց դիրքերը, ինչի համար նրանց հարկավոր էին ֆինանսական միջոցներ:

1909 թ. կոտորածների ընթացքում չբռնագրավված հայկական կապիտալը, չնայած հասցված ծանր հարվածին, մինչև Առաջին աշխարհամարտն ընկած ժամանակահատվածում ադանահայերի տնտեսական որոշակի ձեռքբերումները թուրքական իշխանությունների և մուսուլմանների կողմից յուրացվեցին արդեն Հայոց ցեղասպանության ընթացքում:

Հայերից բռնագավթված գույքը դարձավ ոչ միայն Օսմանյան կայսրության, այլև՝ նրա իրավաժառանգորդ Թուրքիայի Հանրապետության տնտեսության զարգացման հիմքերից մեկը: Հայերի, ինչպես նաև Օսմանյան կայսրության՝ ոչ թուրք մյուս ժողովուրդների ցեղասպանության, հայրենագրկման, նրանց գույքերի և ունեցվածքի բռնագավթման հիմքի վրա ձևավորված ժամանակակից Թուրքիայի Հանրապետությունը ներկայումս լուրջ սպառնալիք է հանդիսանում հարևան երկրների ու ժողովուրդների, առաջին հերթին՝ Հայաստանի ու հայ ժողովրդի համար: Դրա ամենարտահայտիչ դրսևորումն Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո Ադրբեջանին Թուրքիայի ցուցաբերած ռազմական, ռազմատեխնիկական, դիվանագիտական, քարոզչական-տեղեկատվական համակողմանի օժանդակությունն էր, ինչը վճռորոշ ազդեցություն ունեցավ պատերազմի ելքի վրա: Այդ ամենի հետևանքը եղավ նույն Թուրքիայի քաջալերմամբ ու աջակցությամբ Ադրբեջանի կողմից 2022-2023 թթ. Արցախի Հանրապետության շրջափակումը, այնուհետև՝ հայաթափումն ու Արցախի բռնագավթումը:

Ատենախոսության գիտական նորույթը: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված արխիվային փաստաթղթերի և ժամանակի մանուկի համադրմամբ ներկայացվում են Ադանայի հայերի 1909 թ. կոտորածների մանրամասները, Առաջին աշխարհամարտի տարիներին ադանահայերի աքսորը, ոչնչացումը և

ունեցվածքի բռնազավթումը, ինչպես նաև՝ զինադադարից հետո նահանգ վերադարձած հայերի վիճակն ու նրանց առաջին գույքային պահանջները:

Քննության են ենթարկվում օսմանյան իշխանությունների հողային բռնագրավումների պետական քաղաքականության դրսևորումներն Ադանայի նահանգում, նաև տրվում է Ադանայի հայերի տնտեսական առաջընթացի ազդեցությունն Արևմտյան Հայաստանի նահանգների հայ բնակչության հողերի բռնագրավումները հնարավորինս նվազեցնելու գործում: Տարբեր աղբյուրների և պատմագիտական ուսումնասիրությունների համեմատության ու համադրության միջոցով վերստին քննվել են 1909 թ. կոտորածների հետևանքով հայերի մարդկային կորուստների վերաբերյալ հրապարակված տվյալները և ներկայացվել առավել հիմնավոր ու փաստարկված մոտեցումներ:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է Հայոց ցեղասպանության հետևանքով Ադանայի նահանգի կտրվածքով հայերից բռնազավթված կապիտալի մոտավոր ծավալների ներկայացման մեջ, ինչը կարող է նպաստել արևմտահայության բռնագրավյալ գույքի և ունեցվածքի ընդհանուր ծավալի հստակեցման գործին՝ հիմք հանդիսանալով համապատասխան դատական հայցեր ներկայացնելու համար: Ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել նաև «Հայոց պատմության» դասագրքերի նոր և նորագույն շրջանի՝ «Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության» թեմայի վերամշակման և դասավանդման ժամանակ:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել Հայոց ցեղասպանության դրսևորումներն Արևմտյան Հայաստանից դուրս գտնվող Ադանայի նահանգում՝ վեր հանելով ադանահայերի բնաջնջման և ունեզրկման գործընթացի առանձնահատկությունները: Ելնելով այդ նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել XIX դարի վերջին և XX դարի սկզբին Ադանայի նահանգի վարչական բաժանումները, ժողովրդագրական և տնտեսական վիճակը,
- ուսումնասիրել 1909 թ. Ադանայի կոտորածները՝ դրանք դիտարկելով հայերի տնտեսական վերելքը խափանելու և վերջիններիս ունեզրկման քաղաքականության տեսանկյունից,
- լուսաբանել 1909 թ. կոտորածներից հետո Ադանայի նահանգում ստեղծված ծանր կացությունը, ներկայացնել հայերի գործունեության խաթարված ոլորտները վերականգնելուն և առաջացած խնդիրները լուծելուն ուղղված գործողությունները,
- համակողմանի վերլուծել օսմանյան իշխանությունների կողմից հայերի հողագրկման քաղաքականությունը՝ մատնանշելով դրա շարժառիթներն ու նպատակները,
- ներկայացնել Հայոց ցեղասպանության ընթացքում Ադանայի նահանգի հայերի տեղահանությունը, բնաջնջումը և ունեզրկումը,
- վերլուծել 1918 թ. զինադադարից հետո Ադանայի նահանգ վերադարձած ադանահայերի և կայսրության այլ նահանգների հայերի հաստատումը՝ ներկայացնելով նրանց ծայրահեղ ծանր վիճակն ու առաջին գույքային պահանջները:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ատենախոսությունն ընդգրկում է 1909 թվականից մինչև 1918 թվականն ընկած ժամանակահատվածը, սակայն թուրքական իշխանությունների հայաջինջ քաղաքականությունն առավել համակողմանի ներկայացնելու համար անհրաժեշտ ենք համարել շարադրանքը սկսել XIX դարի վերջից՝ հասցնելով մինչև 1920-ական թթ. վերջը:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը: Ատենախոսությունը շարադրվել է պատմանկարագրողական, պատմահամեմատական, համադրական ու պատմաքննական մեթոդների զուգորդմամբ:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության թեման հաստատվել է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի գիտական խորհրդում: Հետազոտության հիմնական դրույթները, վերլուծություններն ու եզրակացությունները հրատարակվել են մենագրության և գիտական հոդվածների տեսքով: Ատենախոսության հիմնական արդյունքները ներկայացվել են գիտաժողովներում: Եզրակացությունը հաստատվել է ՀՅԹԻ հիմնադրամի Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժնի նիստում:

Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածությունը: Ատենախոսության շրջանակում առաջ քաշված հարցերը լուսաբանելու համար հիմնական առաջնահերթությունը տրվել է հայկական սկզբնաղբյուրների: Աշխատության աղբյուրագիտական հենքն են կազմում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող արխիվային որոշ փաստաթղթեր և ժամանակի պարբերական մամուլի բազմաթիվ նյութեր:

Ադանայի նահանգում տեղի ունեցած գործընթացները գրեթե ամենօրյա պարբերականությամբ ուսումնասիրության համար բացառիկ հնարավորություն է ընձեռում Մետրոպ Մաշտոցի անվան Հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանում պահվող Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիվի մի զգալի մասը: Արխիվում ներառված են Ադանայի Հայոց առաջնորդարանի տարբեր տարիների պաշտոնական գրագրությունները¹, Գավառական ժողովի², Քաղաքական ժողովի³ և Տնտեսական խորհրդի⁴ առեւտրագրությունները, ինչպես նաև՝ հայերի գործունեության տարբեր ոլորտները ներկայացնող այլ վավերագրեր⁵:

2022 թ. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության և Մատենադարանի ջանքերով, Ա. Մալխասյանի, Ա. Աստոյանի, Ա. Ավետիսյանի, Ս. Ֆահրադյանի, Լ. Դավթյանի աշխատասիրությամբ հրատարակվեց վերոնշյալ արխիվում պահվող «Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի» արխիվային փաստաթղթերի ամբողջական տետրը⁶: Այս բացառիկ աղբյուրը տեղեկություններ է հաղորդում 1905-1915 թթ. ընթացքում Ադանայի նահանգի Քաղաքական ժողովի ընդունած որոշումների և գործունեության վերաբերյալ:

¹ Տե՛ս Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիվ (անմշակ), Ադանայի Հայոց առաջնորդարանի նամակագրությունը, սկիզբ՝ 22 օգոստոս 1905, վերջ՝ 17 փետրվար 1906; սկիզբ՝ 15 մարտ 1907, վերջ՝ 17 հոկտեմբեր 1907; սկիզբ՝ 10 հունիս 1908, վերջ՝ 28 մարտ 1909; 18 սեպտեմբեր 1914, վերջ՝ մայիս, օգոստոս 1915:

² Տե՛ս ՄՄ, Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիվ (անմշակ), «Ատենագրութիւն Գավառական Ժողովոյ Ատանայի», սկիզբ՝ 27 դեկտեմբեր 1909, վերջ՝ 25/10 մարտ 1914:

³ Տե՛ս ՄՄ, Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիվ (անմշակ), «Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի», սկիզբ՝ 2 մարտ 1905, վերջ՝ 10 ապրիլ 1915:

⁴ Տե՛ս ՄՄ, Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիվ (անմշակ), «Ատենագրութիւն Տնտեսական Խորհրդոյ Ատանայի», սկիզբ՝ 5 մարտ 1905, վերջ՝ 21 մայիս 1914:

⁵ Տե՛ս ՄՄ, Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիվ (անմշակ), փաստաթղթերի հավաքածու:

⁶ Տե՛ս Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի (սկիզբ՝ 2 մարտ 1905, վերջ՝ 10 ապրիլ 1915), խմբ.՝ Մալխասեան Ա. Ա., աշխատ.՝ Մալխասեան Ա. Ա., Աստոյեան Ա. Խ., Աւետիսեան Ա. Ժ., Ֆահրադեան Ս. Մ., Դաւթեան Լ. Դ., Անթիլիաս, տպ. «Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», 2022:

Ատենախոսության համար սկզբնաղբյուրային կարևորագույն աղբյուր է Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահվող «Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվը»⁷, որի վավերագրերում առկա փաստերը հնարավորություն են տվել կարևոր տեղեկություններ հստակեցնել, իսկ փաստաթղթերի ընդհանուր վերլուծության համատեքստում արված եզրակացությունները մեծապես օգնել են առաջադրված խնդիրների հնարավոր լուծումներ գտնելու հարցում:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Անթիլիասի արխիվում պահվող վավերագրերի հիման վրա Ադանայի նահանգի անհատական և ազգապատկան գույքերի ու դրանց արժեքների, տնտեսական կյանքում առաջատար ընկերությունների, ապահովագրական պայմանագրերի և ֆինանսական միջոցների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ են պարունակվում Ա. Մարուքյանի «Թուրքական պետության կողմից ցեղասպանության ընթացքում և դրանից հետո հայերի ունեզրկման քաղաքականության իրագործման քննական վերլուծությունը»⁸ աշխատությունում:

Որպես առաջնային աղբյուր ուսումնասիրության համար առանձնակի նշանակություն են ունեցել Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի Հողային գրավումների հանձնաժողովի տեղեկագրերը⁹, որոնք ներկայացնում են XIX դարավերջին և XX դարասկզբին հայապատկան հողերի բռնագրավումների մասին պաշտոնական տվյալներ: Հողային գրավումների հարցի լուսաբանման համար կարևոր սկզբնաղբյուր է նաև Գ. Տեր-Կարապետյանի աշխատությունը¹⁰:

Ադանայի նահանգի հայ բնակչության մասին համապարփակ տվյալներ ներկայացնելու առումով սկզբնաղբյուրային գրականության նշանակություն ունեն Դ. Ալիշանի¹¹, Հ. Աճառյանի¹², Հ. Առաքելյանի¹³, Ս. Էփրիկյանի¹⁴, Մ. Օրմանյանի¹⁵, ինչպես նաև Ս. Պե-

⁷ Տե՛ս Երուսաղեմի Հայոց պատրիարքարան, Հայկական Հարցի և Հայոց ցեղասպանության արխիվ (այսուհետև՝ ԵՀՊ ՀՀՀՅԱ), (անմշակ):

⁸ Տե՛ս Մարուքյան Ա., Թուրքական պետության կողմից ցեղասպանության ընթացքում և դրանից հետո հայերի ունեզրկման քաղաքականության իրագործման քննական վերլուծություն (էջ 8-84), «Հայոց ցեղասպանության մշակութային և նյութական հետևանքների հաղթահարման մեթոդաբանությունն ու գործիքակազմը» (կոլեկտիվ մեծագրություն), Մարուքյան Ա., Գասպարյան Մ., Աստույան Ա., Ոսկանյան Ա., Երևան, ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2021:

⁹ Տե՛ս Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովի, Տեր Ա., Պաշտոնական հրատարակությունը Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. «Տ. Տողամաճեան», 1910: Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովի, Տեր Բ., Պաշտոնական հրատարակությունը Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. «Օսմ. գործակցական ընկերութեան», 1911: Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովի, Տեր Գ., Պաշտոնական հրատարակությունը Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. «Տ. Տողամաճեան», 1912: Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովի, Տեր Դ., Պաշտոնական հրատարակությունը Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. «Տ. Տողամաճեան», 1912:

¹⁰ Տե՛ս Տ. Կարապետեան Գ., Հողային հարցը հայաբնակ նահանգներու մէջ, Կ. Պոլիս, տպ. «Ազատամարտ»ի, 1910:

¹¹ Տե՛ս Ալիշան Դ., Սիսուան: Համագրություն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ - Ս. Ղազար, 1885:

¹² Տե՛ս Աճառեան Հ., Տաճկահայոց Հարցի պատմութիւնը (Սկզբից մինչև 1915 թ.), Նոր Նախիջեան, տպ. «Ս. Յ. Աագեան», 1915:

¹³ Տե՛ս Առաքելեան Հ., Ջլէթուն: Տեղագրական, ազգագրական եւ վարչական տեսութիւն, Թիֆլիզ, տպ. «Յ. Մարտիրոսեանց», 1896:

¹⁴ Տե՛ս Էփրիկեան Հ. Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, Ս. Ղազար, 1902:

¹⁵ Տե՛ս Օրմանեան Մաղաքիա Արքեպիսկոպոս, Հայոց եկեղեցին, Կոստանդնուպոլիս, հրատ. «Վ. եւ Հ. Տեր-Ներսէսեան», 1911:

տերբուրգում հրատարակված «Կիլիկիա. Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ»¹⁶ աշխատությունները: Նյուֆի լուսաբանումն առավել համակողմանի են դարձրել «Վիճակացոյց Գաւառական Ազգային Վարժարանաց Թուրքիոյ»¹⁷ վիճակացոյցը, նաև՝ Ռ. Օգուզի¹⁸ առևտրային ուղեցույցը:

Թեմայի ուսումնասիրության համար կարևոր սկզբնաղբյուր է հանդիսացել ժամանակի պարբերական մամուլը ևս: Առանձին թերթերում ամփոփված են Ադանայի նահանգի հայ բնակչության վերաբերյալ բացառիկ մանրամասներ: Օգտագործել ենք երեք տասնյակից ավել թերթերի բազմաթիվ համարներ, որոնցից հատկապես արժանահիշատակ են Կ. Պոլսի «Բիւրակն»¹⁹ առևտրային թերթը, «Բիւզանդիոն»-ը²⁰ «ժամանակ»-ը²¹, «Ազատամարտ»-ը²², «Հաճըն»-ը²³, ինչպես նաև՝ 1919 թ. Ադանայում լույս տեսած «Կիլիկիա»²⁴ թերթը:

1909 թ. Ադանայի կոտորածներից հետո հրատարակվել են մեծաթիվ աշխատություններ, որոնց լույսն առանձնանում են Հ. Թերզյանի²⁵, Ս. Պարթևյանի²⁶, Մուշեղ Եպիսկոպոսի²⁷, Ա. Թեոդիկի²⁸, Զ. Եսայանի²⁹, Հ. Աշճյանի³⁰, Ն. Եպս. Դանիելյանի³¹, ինչպես նաև՝ Ա. Ադոսիդեսի³², Ֆ. Դաքեսի³³, Ժ. Բրեզոլի³⁴, Հ. Դավենպորտ Գիբոնսի³⁵, Ռ. Լամբերտի³⁶ և այլ հեղինակների գրքերն ու հուշագրությունները: 1909 թ. Ադանայի կոտորածի հետևանքով հայերի կրած նյութական և մարդկային կորուստների ծավալը,

¹⁶ Տե՛ս Կիլիկիա. Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, Պետերբուրգ, տպ. «Ի. Լիբերմանի», 1894:

¹⁷ Տե՛ս Վիճակացոյց Գաւառական Ազգային Վարժարանաց Թուրքիոյ, Տեսր Բ., Կ. Պոլիս, տպ. «Յ. Մատթէոսեան», 1903:

¹⁸ Տե՛ս Ougouze R., Guide Commercial D'Adana, Stamboul, imp. Djihan Freres, 1924.

¹⁹ Տե՛ս «Բիւրակն», Կ. Պոլիս, 1906, 1907, 1908:

²⁰ Տե՛ս «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1898, 1901, 1909, 1910, 1911, 1912, 1913:

²¹ Տե՛ս «ժամանակ», Կ. Պոլիս, 1909, 1910, 1911, 1912, 1913, 1914:

²² Տե՛ս «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1909, 1910, 1911, 1912, 1913, 1914:

²³ Տե՛ս «Հաճըն», Մարսել, Փասադենա, 1932, 1938, 1939, 1940:

²⁴ Տե՛ս «Կիլիկիա», Ատանա, 1919:

²⁵ Տե՛ս Թէրզեան Յ. Յ., Կիլիկիոյ աղէտը (Պատկերագրոյ), Կ. Պոլիս, տպ. «Յ. Ասատուրեան եւ Որդիք», 1912:

²⁶ Տե՛ս Պարթեւեան Ս., Կիլիկեան Արհաւիրքը, Կ. Պոլիս, գրտ. «Նշան-Պապիկեան», 1909:

²⁷ Տե՛ս Մուշեղ Եպիսկոպոս, Ատանայի Զարդը եւ պատասխանատուները, Գահիրէ, տպ. «Արարատ-Ս. Դարբինեան», 1909:

²⁸ Տե՛ս Թէոդիկ Ա., Ամիս մը՝ի Կիլիկիա, Կ. Պոլիս, տպ. «Վ. եւ Հ. Տէր Ներսէսեան», 1910:

²⁹ Տե՛ս Եսայեան Զ., Աւերակներուն մէջ, Պէյրութ, տպ. «Էտվան», 1957:

³⁰ Տե՛ս Աշճեան Հ. Յ., Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ Յուշեր, Նիւ Եորք, տպ. «Կոչնակ», 1950:

³¹ Տե՛ս Դանիէլեան Ներսէս Եպսկ., Կաթիլ մը Զուր այրած սրտերու, Կ. Պոլիս, գրտ. «Յ. Գլլըճեան», տպ. «Օ. Արզուման», 1912:

³² Տե՛ս Adossidés A., Arméniens et Jeunes-Turcs, Les massacres de Cilicie, Paris, P.-V. Stock, 1910.

³³ Տե՛ս Duckett Ferriman, Turkish Atrocities. The Young Turks and The Truth about Holocaust at Adana in Asia Minor, During April, 1909, London, 1913.

³⁴ Տե՛ս Brézol G., Les Turcs ont passé là... Recueil de documents, dossiers, rapports, requêtes, protestations, suppliques et enquêtes établissant la vérité sur les massacres D'Adana en 1909, Paris, En Vente Chez L'auteur, 1911.

³⁵ Տե՛ս Gibbons Davenport H., The Red Rugs of Tarsus. A Woman's Story of the Armenian Massacres, Paris, Hagop Turabian editor, 1919.

³⁶ Տե՛ս Lambert R., Hadjin and the Armenian Massacres, New York, Fleming H. Revell Company, 1911.

կոտորածի պատճառների վերլուծությունը ներկայացվում է Հ. Պապիկյանի հայտնի ու կարևորագույն տեղեկագրում³⁷:

1910 թ. Ադանայի ջարդի տարելիցին, «Հորիզոն» թերթում Ermino³⁸ ծածկանվամբ Աբրահամ Գյուլխանդանյանը հրատարակել է «Ադանայի ջարդերը»³⁹ հորվածաշարը: Մոտ երկու տասնյակ հրապարակումներում Գյուլխանդանյանը ներկայացրել է Ադանայի և Հալեպի նահանգների ընդհանուր նկարագիրը, համակողմանիորեն վերլուծել տեղի ունեցած ջարդերն ու դրանց հետևանքները:

Թեմայի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն են ունեցել Բ. Եղիայանի⁴⁰, Մ. Քելեշյանի⁴¹, Հ. Պողոսյանի⁴², Մ. Գոճայանի⁴³ հուշամատյանները: Ադանայի նահանգի մասին արժեքավոր տեղեկություններ են պարունակվում նաև Մ. Սերոբյանի⁴⁴, Կ. Աշըգյանի⁴⁵, Մ. Խապրիկի⁴⁶ հուշերում ու ինքնակենսագրական հուշագրություններում: Ուսումնասիրվող ժամանակահատվածում Կիլիկիայի պատմության հետազոտության համար առանձնակի նշանակություն ունեն Հ. Սիմոնյանի⁴⁷, Ռ. Սահակյանի⁴⁸, Պ. Տեր-Մաթոսյանի⁴⁹, Ռ. Թաթոյանի⁵⁰ աշխատությունները:

³⁷ Տե՛ս Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի, Ատանայի եղեռնը, թարգ.՝ Յակոբ Սարգիսեան, Կ. Պոլիս, գրտ. «Կիլիկիա», տպգր. «Կ.-Արձագանգ»ի, 1919:

³⁸ Եղիշե Իշխանյանի վկայությամբ Ermino ծածկանվամբ հանդես է եկել Աբրահամ Գյուլխանդանյանը (տե՛ս Հովակիմյան Բ. Մ., Հայոց ծածկանունների բառարան (8000 հեղինակի 25000 ծածկանուն), Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2005, էջ 475-476):

³⁹ Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1910, թիւ 22, 24, 27, 33, 39, 40, 42, 45, 47, 52, 54, 55, 56, 64, 66, 72, 73:

⁴⁰ Տե՛ս Եղիայեան Բ., Ատանայի Հայոց պատմութիւն, Հրատարակութիւն Ատանայի հայրենակցական միութեան, Անթիլիաս-Լիբանան, տպ. «Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», 1970: Նույնի, Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, տպ. «Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», 1975:

⁴¹ Տե՛ս Քելեշեան Մ., Սիւ-Մատեան, Պէյրութ, տպ. «Հայ Ճեմարանի», 1949:

⁴² Տե՛ս Պողոսեան Յ. Պ., Հաճընի ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գօգան-Տաղի հայ գիւղերը, Լոս Անճելլոս, Քալիֆօրնիա, տպ. «Պօզաճեան», 1942:

⁴³ Տե՛ս Գոճայեան Մ., Պատմութիւն Չորք-Մարզպանի (Տէօթ-Եոյ) գիւղաքաղաք մը Կիլիկիոյ մէջ, Լոս-Անճելլոս, Լոս-Անճելլոսի Չորք-Մարզպանի հայրենակցական միութիւն, 2005:

⁴⁴ Տե՛ս Սերոբեան Մ., Դիտումներ եւ Դատումներ (էջեր Օրագրէս), Պէյրութ, տպ. «Ազգակ», 1932:

⁴⁵ Տե՛ս Աշըգեան Կ. Բ., Ուզուն Աշըգեան գերդաստանի պատմութիւնը, Պէյրութ, տպ. «Կ. Տօնիկեան», 1968:

⁴⁶ Տե՛ս Խապրիկ Մ., Եթէ Չորք-Մարզպանը ինձի հետ խօսէր..., Պէյրութ, տպ. «Կ. Տօնիկեան», 1983:

⁴⁷ Տե՛ս Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, ԵՊՀ հրատ., 2009:

⁴⁸ Տե՛ս Սահակյան Ռ. Գ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970:

⁴⁹ Տե՛ս Der Matossian B., The Horrors of Adana, Revolution and Violence in the Early Twentieth Century, Stanford, Stanford University Press, 2022.

⁵⁰ Տե՛ս Թաթոյան Ռ., Կիլիկիահայության թիվը Հայոց ցեղասպանության նախօրյակին, Երևան, ՀՅԹԻ հրատ., 2021:

Հայոց ցեղասպանության նյութական կորուստները քննարկելու տեսակետից առանձնացրել ենք Լ. Վարդանի⁵¹, Յ. Բարսեղովի⁵², Ա. Մարությանի⁵³, Ա. Աստոյանի⁵⁴, Ա. Հովհաննիսյանի⁵⁵ մենագրությունները: Հայոց ցեղասպանության պատմության տարբեր հիմնահարցերի պարզաբանման առումով կարևորել ենք Ա. Անտոնյանի⁵⁶, Գրիկերի⁵⁷, Հ. Ղազարյանի⁵⁸, Հ. Ինճիկյանի⁵⁹, Զ. Կիրակոսյանի⁶⁰, Վ. Դադրյանի⁶¹, Ռ. Գևորգյանի⁶² և Ռ. Սաֆրաստյանի⁶³ արժեքավոր աշխատությունները:

Ատենախոսության համար կարևոր սկզբնաղբյուր են հանդիսացել Սամվել Պողանյանի⁶⁴ և Գևորգ Եափուջյանի⁶⁵ անտիպ հուշագրությունները, որոնց հաղորդած արժեքավոր տեղեկություններն առավել համապարփակ և ամբողջական են դարձել ատենախոսության մեջ արձարձվող հարցերը:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: «Ադանայի նահանգի հայ բնակչության բնաջնջումը եվ ունեցրելու 1909-1918 թթ.» ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, վեց ենթագլխից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 192 էջ:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, տրված են նպատակը և խնդիրները, ժամանակագրական շրջանակը, մեթոդաբանությունը,

⁵¹ Տե՛ս Լեոն Վարդան, Հայկական տասնհինգը եւ Հայերու լքեալ գոյքերը, Պէյրուֆ, տպ. «Ատլաս», 1970:

⁵² Տե՛ս Բարսեղով Յ., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Երևան, ՀՅԹԻ, 1999:

⁵³ Տե՛ս Մարության Ա., Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, Երևան, ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2015:

⁵⁴ Տե՛ս Աստոյան Ա., Դարի կողոպուտը. Հայերի ունեցրելու Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Երևան, «Նաիրի» հրատ., 2013:

⁵⁵ Տե՛ս Հովհաննիսյան Ա., Հայերի ունեցրելու գործընթացը Օսմանյան կայսրությունում և քեմալական Թուրքիայում, Երևան, «Գիտություն» հրատ., 2016:

⁵⁶ Տե՛ս Անտոնյան Ա., Մեծ Ռճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեթի փաշա, Երևան, «Արևիկ», 1990:

⁵⁷ Տե՛ս Գրիկեր, Եղզատի հայասպանության վաերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, «Ոսկետառ» հրատ., 1980:

⁵⁸ Տե՛ս Ղազարեան Հ. Գ., Ցեղասպան թուրքը, Բեյրութ, տպ. «Համազգային», 1968:

⁵⁹ Տե՛ս Инджикян О. Г., Буржуазия Османской Империи, Ереван, Издательство Академии наук Армянской ССР, 1977.

⁶⁰ Տե՛ս Կիրակոսյան Զ. Ս., Առաջին Համաշխարհային պատերազմը և Արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, «Հայաստան» հրատ., 1967:

⁶¹ Տե՛ս Дадрян В., Геноцид Армян: Содержание Преступления, Ереван, МИГА, 2014; Dadrian V., The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Oxford, Berghahn Books, 2003.

⁶² Տե՛ս Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History, London-New York, I. B. Tauris, 2011.

⁶³ Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, «Լուսակն» հրատ., 2009:

⁶⁴ Տե՛ս Պողանյան Ա., Հուշագրություն Ճուլ Մարգարյանի, Լեւինական, անտիպ, 1965: Պահվում է Վերա Սահակյանի մոտ:

⁶⁵ Տե՛ս Եափուճեան Գ., Գէորգ Եափուճեանի գիրքը, Երևան, 1960-ական թթ.: Պահվում է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի ֆոնդերում, բաժին 8, ֆհ 58:

ներկայացված է գիտական նորույթը, գործնական նշանակությունը, աղբյուրագիտական հիմքը և թեմայի ուսումնասիրվածության աստիճանը:

Առաջին գլուխը՝ «Ադանայի նահանգի հայության ժողովրդագրական, տնտեսական վիճակը և 1909 թ. կոտորածների հետևանքները», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում ներկայացված է Ադանայի նահանգի ընդհանուր նկարագիրը, հայության ժողովրդագրական և տնտեսական վիճակը: XIX դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրության մաս կազմող պատմական Կիլիկիայի տարածքի մեծ մասի վրա ձևավորվում է Ադանայի նահանգը, իսկ հարավարևելյան մասը ներառվում է Հալեպի նահանգի մեջ: XIX դարում կատարված վարչական փոփոխությունների հետևանքով ստեղծվում են նոր միավորներ՝ նահանգներ: 1875 թ. (այլ տվյալներով՝ 1870 թ.⁶⁶) Ադանային շնորհվում է նահանգի կարգավիճակ⁶⁷: XIX դարի վերջին Ադանայի նահանգը բաղկացած էր չորս գավառից (սանջաք)՝ Ադանա, Իչել (Սելևկիա), Միս (Քոզան), Ջերբե-Բերեքթեթ, որոնք բաժանվում էին 19 գավառակի (քազա)՝ 49 գյուղախմբերով (նահիյե)⁶⁸:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Ադանայի նահանգում պահպանվել էին հայաշատ գավառներ ու գավառակներ, քաղաքներ և գյուղեր՝ իրենց մշակութային արժեքներով, շարունակաբար զարգացող տնտեսությամբ: Առաջին աշխարհամարտի նախօրեին Ադանայի նահանգում նշվում է 119.414 հայ⁶⁹:

XIX դարը շրջադարձային եղավ կայսրության ժողովուրդների համար, այդ թվում՝ տնտեսական զարգացման տեսակետից: Ադանահայերը, նահանգի բարենպաստ աշխարհագրական դիրքից օգտվելով, կարողացել էին կայուն զարգացող տնտեսական համակարգ ստեղծել, ինչի արդյունքում փոխվել էր նրանց ներքին տնտեսվարող սուբյեկտի կարգավիճակը՝ արհեստավորներից աստիճանաբար վերածելով արդյունաբերողների: Ադանայի նահանգի հայ արդյունաբերողներին թույլացնելու և նրանց տնտեսական կարողությունները սահմանափակելու խնդիրն աստիճանաբար ավելի է ընդգծվում 1915 թ. առաջ՝ դառնալով թուրքական իշխանությունների հակահայկական քաղաքականության բաղկացուցիչ մաս:

Երկրորդ ենթագլխում ներկայացված են Ադանայի հայերի 1909 թ. կոտորածները և դրան ուղեկցող զանգվածային ունեզրկման հետևանքները: Ադանայի կոտորածը դարձավ կայսրության հայերի նկատմամբ իրականացվելիք ցեղասպանական ծրագրի նախանշանը: Մի քանի շաբաթվա ընթացքում սպանվեց շուրջ 30.000 հայ, ոչնչացվեց հայերի տնտեսության հիմնական մասը: Օսմանյան խորհրդարանի պատգամավոր, օրենսդիր մարմնի կողմից Ադանայի կոտորածները հետաքննելու համար ստեղծված հանձնախմբի անդամ Հակոբ Պապիկյանը 1909 թ. հունիսի 7-ին ներկայացրել է ցուցակ՝ սպանված հայերի թիվը նշելով 19.479, այնուհետև տալիս է հույների, սիրիացիների ու քաղղեացիների զոհերի հանրագումարը՝ ընդհանուր նշելով 21.001 զոհ⁷⁰: Հունիսի 13/25-ին իր տեղեկագրում Պապիկյան նշում է, որ ոչ բնիկ զոհերի թիվը մեծ է, բայց նրանց ճիշտ թիվը հասկանալու համար առնվազն մեկ տարի է անհրաժեշտ⁷¹: Ինչպես հայտնի է, Պապիկյանը չհասցրեց ավարտել իր աշխատանքները: 1909 թ. հուլիսի 20/2

⁶⁶ Sezen T., Osmanlı Yer Adları, Ankara, T.C. Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü, 2017, s. 7.

⁶⁷ Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 19:

⁶⁸ Տե՛ս Առաքելեան Հ., նշվ. աշխ., էջ 34-35:

⁶⁹ Kévorkian R. H., Paboudjian P. B., 1915 Öncesinde Osmanlı İmparatorluğu'nda Ermeniler, İstanbul, Aras, 2012, s. 63.

⁷⁰ Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի, Ասանայի եղեռնը, էջ 48:

⁷¹ Նույն տեղում, էջ 19-20:

օգոստոսի համարում «Ժամանակ»-ը հաղորդում է նրա հանկարծամահ լինելու մասին՝ նշելով, որ հուլիսի 21-ին Պապիկյանը խորհրդարանին պետք է ներկայացներ իր կատարած քննության տեղեկագիրը⁷²: Դեպքերի ականատես, հրապարակախոս Հակոբ Թերզյանն Ադանայի կոտորածների զոհերի ընդհանուր թիվը նշում է 22.512, որից՝ 18.839 հայեր: Մինևույն ժամանակ Թերզյանը գրում է, որ վերոնշյալ թվի մեջ հայ պանդուխտները ներառված չեն⁷³:

Ինչպես Պապիկյանի, այնպես էլ Թերզյանի ցուցակները չեն արտացոլում Ադանայի նահանգի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերը, այլ երկուսն էլ ներկայացնում են միայն Ադանայի Հայոց թեմի ենթակայության տակ գտնվող բնակավայրերը: Պապիկյանի ցուցակն առավել ընդհանրական է և հակիրճ, իսկ Թերզյանինը՝ չնչին տարբերությամբ կրկնում է Մուշեղ Եպիսկոպոսի՝ 1908 թ. հրատարակած Ադանայի թեմական քաղաքների և գյուղերի վիճակագրական աղյուսակի բնակավայրերի ցանկը⁷⁴: Ըստ այդմ պարզ է դառնում, որ վերոնշյալ ցուցակները ընդգրկում են ոչ թե Ադանայի նահանգի, այլ Ադանայի Հայոց թեմի ենթակայության տակ գտնվող բնակավայրերը՝ այն էլ ոչ ամբողջական: Թերզյանի ընդարձակ ցուցակում բացակայում են, օրինակ, Մերսինը, Տարսոնը և այլ բնակավայրեր, որոնցում ապրում էին հայեր և ենթարկվել էին կոտորածների: Կարող ենք արձանագրել, որ առհասարակ երկու ցուցակում բացակայում են Ադանայի նահանգի Սսի (Քոզան) գավառի բնակավայրերը, ինչը ևս մեկ անգամ փաստում է, որ ներկայացվածը միայն Ադանայի Հայոց թեմի ենթակայության տակ եղած բնակավայրերի զոհերի տվյալներն են:

1912 թ. դեկտեմբերի 24-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն Ադանայի կոտորածների մասին հիշատակելիս զոհերի թիվը նշում է մոտ 30.000⁷⁵: Երոսաղեմի Հայոց պատրիարքարանում պահպանվող 1913 թ. տեղեկագրերից մեկում ևս նշվում է, որ սպանվել է 30.000 հայ⁷⁶: 1913 թ. նոյեմբերի 17/30-ին Պողոս Նուբարը նույնպես նշում է 30.000-ից ավել զոհերի թվի մասին⁷⁷:

Երկրորդ գլուխը՝ **«Ադանայի նահանգի հայերի տնտեսության վերականգնման փորձերը և օսմանյան իշխանությունների հողագրկման քաղաքականությունը»**, նույնպես բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում ներկայացվում են Ադանայի նահանգի հայերի տնտեսության վերականգնման փորձերը 1910-1914 թթ. ընթացքում: 1909 թ. կոտորածից անմիջապես հետո Կ. Պոլսի ազգային իշխանությունը պատվիրակություն է ուղարկում Կիլիկիա՝ կոտորածի հետևանքներն ու ծավալներն ուսումնասիրելու համար: Զուգահեռ, դեռևս 1908 թ. սահմանադրության վերահաստատումից հետո կազմված «Նպաստից Յանձնաժողովին» լիազորվում է աշխարհի տարբեր վայրերից հայերի ուղարկած օգնությունը հավաքել ու սկսել աշխատանքները: Վերոնշյալ հանձնաժողովից բացի՝ սուլթանի հովանավորությամբ կազմվում է նաև «Միջազգային Նպաստից Յանձնա-

⁷² «Ժամանակ», Կ.Պոլիս, թիվ 232, 1909, Յուլիս 20-2 Օգոստոս, էջ 3:

⁷³ Թեթրգեան Յ. Յ., նշվ. աշխ., էջ 278-281:

⁷⁴ Մուշեղ Եպիսկոպոս, Հովիհին խրատները ուղղումը Ատանայի ու ամբողջ թեմական ժողովուրդին, Կ. Պոլիս, տպ. «Յ. Մատթեոսեան», 1908, էջ 172-175:

⁷⁵ Տե՛ս ԵՇՊ ՀՀՀՅԱ, տուփ 1, թղթապանակ ե, վավերագիր Հ^Պ ե 510աբ - 513աբ (Հմր 50):

⁷⁶ ԵՇՊ ՀՀՀՅԱ, տուփ 1, թղթապանակ ե, վավերագիր Հ^Պ ե 438 - ե 441:

⁷⁷ ԵՇՊ ՀՀՀՅԱ, տուփ 1, թղթապանակ ե, վավերագիր Հ^Պ ե 487 - ե 504 (Հմր 47): Ն.Պ. Պողոս Նուբար փաշայի զեկուցումը, «Արարատ», հ. Ա., 1914, Ա. Էջմիածին, էջ 46:

ժողով»⁷⁸: Ազգային Կենտրոնական Վարչության Քաղաքական ժողովը կազմում է նաև Որբախնամ հանձնաժողով⁷⁹, իսկ Այրիախնամ հանձնաժողովն իր առաջին նիստն է գումարում 1910 թ. սեպտեմբերի 15-ին⁸⁰:

Ադանայի ազգային գործիչները, բազմաթիվ խնդիրների լուծմանը մեկտեղ, փորձում էին կարգավորել Ադանայի Հայոց առաջնորդարանի վարչական մարմինների գործունեությունը: Գավառական ժողովն իր առաջին նիստը գումարում է 1909 թ. դեկտեմբերի 27-ին⁸¹, որի ընթացքում ընտրվում է Ադանայի Քաղաքական ժողովի նոր կազմը⁸², Ադանայի Տնտեսական խորհուրդն իր գործունեությունը վերսկսում է 1910 թ. փետրվարին⁸³: Վարչական մարմինների գործունեության արագ վերակազմավորումն ուղղված էր նյութական կորուստները հաղթահարելու, տնտեսական կարողությունները հնարավորինս վերականգնելու, ինչպես նաև՝ ազգապատկան ու անհատական գույքը պաշտպանելու գործին: 1909 թ. Ադանայի հայերի ջարդը ծանր հարված էր ոչ միայն մեծաթիվ զոհերի, այլև հայերի տնտեսական առաջընթացը կասեցնելու և վերջիններիս ունեգրվելու տեսանկյունից: Զարդի հետևանքով Ադանայի հայ ձեռնարկատերերի մեծ մասը կայուն հարկատուի կարգավիճակից վերածվեց նպաստառուի, իսկ արտագնա աշխատանքի կենտրոնատեղի հանդիսացող Ադանայի նահանգը գրեթե դարձավ գործազրկության կենտրոնատեղի:

1910-1914 թթ. ընթացքում բարեգործական տարբեր կառույցների օժանդակությամբ և տեղի ազգային իշխանությունների ու ձեռնարկատերերի ջանքերով նահանգի հայության տնտեսական վիճակը մասամբ սկսում է վերականգնվել: Մինչև Առաջին աշխարհամարտը հայերն անգամ հասցրեցին տնտեսական որոշ ձեռքբերումներ ունենալ, որոնք հետագայում ոչնչացվեցին կամ յուրացվեցին Հայոց ցեղասպանության ընթացքում:

Երկրորդ ենթագլուխը ներկայացնում է Օսմանյան իշխանությունների կողմից Ադանայի նահանգի հայերի հողազրկման քաղաքականությունը մինչև Առաջին աշխարհամարտը: XIX դարավերջից Օսմանյան կայսրությունում հայերի հողազրկման գործընթացը ստանում է համակարգված ու հետևողական բնույթ: Եթե փորձենք քարտեզագրել կայսրությունում հայերից բռնագրավված հողատարածքները, ապա ակնառու է դառնում, որ այն տարեցտարի ավելի մեծ չափերի է հասնում: Հայապատկան հողերի բռնագրավումները փաստելու և հարցին հնարավոր լուծում տալու համար 1909 թ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը ստեղծում է Հողային հանձնաժողով, որը պատրաստում և հրապարակում է հայոց ազգապատկան ու անհատական գրավյալ հողերի ու կալվածքների ցուցակները⁸⁴, հստակ նշումով, որ դրանք ամբողջական չեն և ունեն շարունակական համալրման կարիք: Ադանայի նահանգում իրականացված բռնագրավումները նույնպես արձանագրված են Հողային գրավումների տեղեկագրերում⁸⁵:

⁷⁸ Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, 1910 սեպտ. 11-1912 սեպտ. 11, Յաւելուած Տեղեկագիր քննիչ-պատուիրակ Պ. Ժագ Սայապալեանի, Ղալաթիա, «Շանթ», 1912, էջ 7-8:

⁷⁹ Կիլիկիոյ Որբախնամ Կեդր. Յանձնաժողով, Տեղեկագիր, 1909 Օգոստոս 7 - 1910 Դեկտեմբեր 31, տպ. «Օ. Արզուման», Կ. Պոլիս, 1911, էջ 3:

⁸⁰ Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 9-10:

⁸¹ ՄՄ, «Ատենագրութիւն Գաւառական Ժողովոյ Ատանայի», 27 դեկտեմբերի, 1909, թ. 1:

⁸² ՄՄ, «Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի», Ա նիստ, 1 հունվարի, 1910, թ. 49:

⁸³ ՄՄ, «Ատենագրութիւն Տնտեսական Խորհրդոյ Ատանայի», 10 փետրվարի, 1910, թ. 44:

⁸⁴ Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ, Տեսր Ա., Տեսր Բ., Տեսր Գ., Տեսր Դ.:

⁸⁵ Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ, Տեսր Ա., էջ 10-11; Տեսր Բ., էջ 5; Տեսր Գ., էջ 5-6:

1909 թ. Ադանայի կոտորածների հետևանքով ևս տեղի ունեցավ հայերի զանգվածային հողազրկում: Շատ հողեր մնացին անտեր, վերապրածների մի մասը, կորցնելով գույքն ու ունեցվածքը, հեռացավ, անմշակ մնալու պատճառով որոշ հողեր օտարվեցին հայերից: Այրված գույքի հետ ոչնչացվում էին նաև հայերի սեփականության փաստաթղթերը, ուստի վերապրածների որոշ մասն իր իրավունքները հաստատելու լուրջ խնդրի առջև է կանգնում: Թե՛ ջարդից առաջ և թե՛ հետո Ադանայի նահանգում շարունակվում էին մուսուլման փախստականների վերաբնակեցումները: «Բիզանդիոն» թերթը նշվում էր, որ «... Ատանայի նահանգին մեջ գտնուող մշակելի 14,000,000 տօնիան հողերէն հազիվ հազ մէկ միլիոնը կ'մշակուի»⁸⁶: Այս հանգամանքը ևս մեկ անգամ փաստում է, որ այլ վայրերից Ադանայում հաստատվող մուսուլման փախստականներն ուղղորդված էին բնակություն հաստատում հայապատկան հողերի վրա՝ հատուկ ջգտագործելով նահանգի մյուս մշակելի հողերի զգալի մասը: Հայերի հողազրկման գործընթացը կառավարությունը հասցնում էր մինչև վերջ՝ գրեթե անհնարին դարձնելով հայերի կորցրած սեփականությունն օրինական ճանապարհով հետ վերադարձնելու բոլոր հնարավորությունները: Թուրքական իշխանությունների կողմից հայերի հողային բռնագրավումների հետևողական քաղաքականության, ինչպես նաև դրա մեթոդների ուսումնասիրությունն առավել տեսանելի է դարձնում հայերի ոչնչացման թուրքական պետական ծրագրի համակարգված լինելու բնույթը:

Երրորդ գլուխը՝ «**Ադանայի նահանգի հայության դրությունն Առաջին աշխարհամարտի տարիներին և զինադադարի առաջին ամիսներին**», ևս բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում ներկայացվում է Ադանայի նահանգի հայերի բնաջնջումը և ունեզրկումն Առաջին աշխարհամարտի տարիներին: Ադանայի նահանգում հայերի նկատմամբ հալածանքները ևս սկսվում են 1914 թ. վերջից: 1914 թ. հոկտեմբերին կաթողիկոս Սահակ Բ-ն ստանում է Ադանայի Հայոց թեմի առաջնորդ Գևորգ Ծ. վրդ. Արսլանյանի պաշտոնանկման մասին հեռագրական հրամանը, ինչը կարողանում է կանխել⁸⁷: 1915 թ. փետրվարի 12-ի Ադանայի Հայոց առաջնորդը կաթողիկոսին հաղորդում է Չորք-Մարզպանում ստեղծված իրավիճակի մասին⁸⁸: Հաճընում հայերի նկատմամբ հալածանքները սաստկանում են 1915 թ. հունվարի սկզբին⁸⁹: Մայիսին Ստամբուլից են ունենում խուզարկություններ: Մայիսի 6-ին Ադանայում ազդարարվում է դեպի Կոնիա գաղթելու հրամանի մասին⁹⁰: Առաջին քարավանը բաղկացած էր 4.000 հոգուց⁹¹: Մերսինում ևս սկսվում են խուզարկություններ, և քաղաքից մոտ 600 տուն հայ է տեղահանվում⁹²:

Առանց կառավարության նիստ հրավիրելու՝ մայիսի 27-ին ընդունվում, ապա՝ հունիսի 1-ին հրապարակվում ու ուժի մեջ է մտնում «Պատերազմի ժամանակ կառավարության գործունեության դեմ ժուրու եկողների համար ռազմական տեսանկյունից առնվելիք միջոցների մասին ժամանակավոր օրենքը», որը հայտնի է որպես «Տեղահանության օրենք»⁹³: Խորհրդարանի կողմից չհաստատված ժամանակավոր այդ օրենք-

⁸⁶ «Բիզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 4,653, 1912, Յունուար 31-13 Փետրուար, էջ 1:

⁸⁷ Կիլիկեան կսկիծներ, 1903-1915, կազմ.՝ Զ. Պզտիկեան, Պէյրուք, տպ. «Հրազդան», 1927, էջ 130:

⁸⁸ ՄՄ, Ադանայի Հայոց առաջնորդարանի նամակագրությունը (18 սեպտեմբերի 1914 -31 մայիսի 1915), (անմշակ), էջ 264:

⁸⁹ Պօղոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 585-593:

⁹⁰ Կիլիկեան կսկիծներ, էջ 169-170:

⁹¹ Der Matossian B., նշվ. աշխ., p. 226.

⁹² Ակունի Ա., Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, տպ. «Յ. Ասատուրեան որդիք», 1920, էջ 296-298:

⁹³ Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 178-179:

քի հիման վրա արդեն 1915 թ. հունիսի 10-ին կառավարության կողմից ընդունվում է ևս մի ժամանակավոր օրենք, որը ցուցումներ էր բովանդակում «պատերազմի և քաղաքական արտակարգ պայմանների հետևանքով տեղահանված հայերի թողած շարժական և անշարժ կայքի» հետ վարվելու մասին: Հայկական ամբողջ ունեցվածքը հայտարարում են «լքյալ» դրանք կառավարելու համար ստեղծելով հատուկ հանձնաժողովներ: 1915 թ. սեպտեմբերի 13/26-ին ընդունվում է ունեցրկման և բռնագրավման մասին կանոնադրությունը⁹⁴: Նախարարների խորհրդից խորհրդարանը տեղահանության ժամանակավոր օրենքի փաթեթը ստանում է 1915 թ. սեպտեմբերի 21-ին, որը հաստատվում է միայն 1916 թ. դեկտեմբերի 1-ին, երբ հայ ժողովրդի մեծագույն մասն արդեն ոչնչացված էր կամ աքսորված⁹⁵:

1916 թ. օսմանյան կառավարությունն ընդունում է «Կանոնագիր Հայոց Կաթողիկոսության եւ Պատրիարքութեան»⁹⁶ նոր կանոնադրությունը, որով կասեցվում է 1860 թ. Ազգային Սահմանադրությունը (վերահաստատվում է միայն 1918 թ. նոյեմբերի 11-ին)⁹⁷: 1916 թ. օգոստոսին կայսերական հրամանագրով Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոսը Երուսաղեմի պատրիարք և Թուրքիո Հայոց կաթողիկոս է հռչակվում⁹⁸: Նոր կանոնադրությամբ սահմանվում էր, որ Սսի ու Աղթամարի Հայ կաթողիկոսությունները, Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունները միացվում էին և խզում հարաբերությունները Էջմիածնի հետ⁹⁹:

Առաջին աշխարհամարտի տարիներին ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև կայսրության մյուս հատվածներում, մասնավորապես՝ Ադանայի նահանգում, հայերի աքսորը, կողոպուտն ու բնաջնջումը տեղի էր ունենում կենտրոնական կառավարության հրամաններով, տեղական իշխանությունների և հատուկ այդ նպատակով ստեղծված կառույցների ու խմբերի ջանքերով, մուսուլման հասարակ բնակչության լայն ներգրավվածությամբ: Մասշտաբային այդ հանցագործությունն իրականացվում էր հստակ ժամանակացույցով, գործողությունների ճշգրիտ հերթականությամբ, ինչն ինքնին հաստատում էր նախապես կազմված ծրագրի առկայությունը՝ ապացուցելով Հայոց ցեղասպանության կանխամտածված լինելու հանգամանքը:

Երկրորդ ենթագլուխը ներկայացնում է աքսորյալ հայերի վերադարձը հեղափոխության Ադանայի նահանգ և բռնագրավյալ գոյքերի խնդիրը: 1918 թ. Մուրթոսի զինադադարից հետո աքսորված հայերի որոշ մասը սկսում է վերադառնալ Ադանայի նահանգ: Վերադարձողների թվում էին ոչ միայն Կիլիկիայի, այլև Արևմտյան Հայաստանի նահանգներից և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վայրերից

⁹⁴ Բարսեղով Յ., նշվ. աշխ., էջ 5-6:

⁹⁵ Авакян А., Геноцид 1915 г., Механизмы принятия и исполнения решений, Ереван, изд. «Гитутюн», 1999, с. 61.

⁹⁶ Օսմանեան Պետութիւնը եւ Հայ. Եկեղեցիի Անկախութիւնը, Յանելուած Կ. Պատրիարքարանի Կանոնագիրը, գրեց Հրանդ Ծ. Վարդապետ, Կ. Պոլիս, հրատ. «Տաճար»ի, տպ. «Յ. Ասատուրեան եւ Որդի», 1917, էջ 65:

⁹⁷ Գրիկեր, նշվ. աշխ., էջ 70:

⁹⁸ Չիլինկիրեան Եղիշէ եպս., Յուշեր և նօթեր Ս. Երուսաղէմէն, Պոլսէն եւ Դամասկոսէն (1916-1920), Սրբոց Յակոբեանց վանք Երուսաղէմ, Աղեքսանդրիա, տպագր. «Ստեփանեան եղբարք», 1923, էջ 16:

⁹⁹ Բարգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս-Լիբանան, տպ. «Դարեվանոց Կաթողիկոսութեան Կիլիկիոյ», 1939, էջ 933:

բռնագաղթված հայեր: Չինադադարի առաջին ամիսներից մինչև 1919 թ. կեսերը շուրջ 150.000 վերապրած հայեր հաստատվում են կիլիկյան քաղաքներում¹⁰⁰:

Չինադադարից հետո հայկական գույքին տիրացած երիտթուրքերը սկսում էին վաճառել թանկարժեք իրերը: Հարկավոր է նշել, որ բռնագրավված ու կողոպտված իրերի հետքերը կորցնելու գործընթացը սկսվել էր հենց կողոպուտին զուգահեռ: Օսմանյան կայսրության մի հատվածում գրավված կամ կողոպտված ապրանքները կարող էին հայտնաբերվել բոլորովին այլ վայրում. սովորաբար դրանք կուտակվում էին մայրաքաղաքում կամ հարակից շրջաններում, ինչպես, օրինակ, Կիլիկիայում կողոպտված իրերի մի մասը հայտնաբերվել են Ջմյուռնիայում և Կ. Պոլսում եղած ապրանքների մեջ¹⁰¹: Կիլիկիայի հայերից բռնագրավված գույքը վերադարձնելու խնդիրներով զբաղվում էր նաև Կիլիկիայի ընդհանուր կառավարիչ Բրեմոնը: Գույքի բռնագրավումը և դրա հետագա վաճառքն անօրինական համարելով՝ նա ընդունել էր մի շարք որոշումներ, որոնք հրատարակվել են 1919 թ. Ադանայում¹⁰²:

Հայոց ցեղասպանության ընթացքում հայերից բռնագրավված գույքի դիմաց հատուցում ստանալու համար՝ Ադանայում¹⁰³, Չորք-Մարզպանում¹⁰⁴ և Սսում¹⁰⁵ ստեղծվել էին հանձնախմբեր: Միաժամանակ, վնասների չափը ճշտելու համար Ազգային իշխանությունները կազմել և գավառներ էին ուղարկել հարցարաններ¹⁰⁶:

1920 թ. հունվարի 8-ին օսմանյան խորհրդարանն ընդունեց «Լքյալ գույքի» մասին 33 հոդվածից բաղկացած նոր օրենքը¹⁰⁷, որը հունվարի 12-ին հրապարակվեց օսմանյան մամուլում և թարգմանաբար արտատպվեց Կ. Պոլսի «Ժամանակ»¹⁰⁸ թերթում: Վերոնշյալ օրենքի 30-րդ հոդվածը չեղյալ էր համարում 1915 թ. սեպտեմբերի 13-ի օրենքը և դրա գործադրության վերաբերյալ հոկտեմբերի 26-ի կանոնադրությունը¹⁰⁹: Այս օրենքը Ֆինանսների նախարարությունն ուղարկում է գավառի իշխանություններին՝ հրահանգելով այն ճշգրտորեն գործադրել¹¹⁰: Սակայն այն ոչ միայն չկիրառվեց, այլև վիճակն ավելի բարդացվեց քեմալականների կողմից շարունակաբար ընդունվող նոր օրենքներով:

1920 թ. ապրիլի 23-ին քեմալականների ընդունած առաջին փաստաթղթերից մեկն արգելում էր նախկին օսմանահպատակների վերադարձը հայրենիք, հետագայում՝ 1923 թ. ապրիլի 15-ին, վերականգնվեց 1915 թ. սեպտեմբերի 13-ի երիտթուրքերի ընդունած «Լքյալ գույքի» մասին օրենքը, որին կցվեցին ևս վեց հոդվածներ, որոնցով հայերի իրավունքներն ավելի էին ոտնահարվում: 1923 թ. հունիսի 23-ին Անկարայի Ազգային

¹⁰⁰ Տե՛ս Սաաթճեան Ն., Մարաշի աղէտը 1920ին, ասպետական Ֆրանսիայի անփառունակ նահանջը, 1915-1965 Յուշամատեան Մեծ Եղեռնի, խմբ.՝ Ահարոնեան Գ., Պետրոս, հրատ. Զարթօնք», 1965, էջ 833:

¹⁰¹ «Կիլիկիա», Ատանա, թիւ 35, 1919, մայիսի 18, էջ 2:

¹⁰² «Կիլիկիա», Ատանա, թիւ 31, 1919, մայիսի 11, էջ 2:

¹⁰³ «Կիլիկիա», Ատանա, թիւ 40, 1919, մայիսի 24, էջ 2:

¹⁰⁴ Հայ կեանքը Տէրթթօլի մէջ, «Հայ Ձայն», Ատանա, թիւ 125, 1919, մայիսի 16, էջ 1:

¹⁰⁵ Հայ կեանքը Սիսի մէջ, «Հայ Ձայն», Ատանա, թիւ 113, 1919, մայիսի 1, էջ 3:

¹⁰⁶ «Ժամանակ», Կ. Պոլիս, թիւ 3494, 1919, մարտ 30/12 ապրիլ, էջ 2:

¹⁰⁷ Մարուքյան Ա., Թուրքական պետության կողմից ցեղասպանության ընթացքում..., էջ 42:

¹⁰⁸ Հոդված 1-5 (Կարեւոր օրէնք մը տարագրեալ հայոց գոյքերուն մասին, «Ժամանակ», Կ. Պոլիս, թիւ 3731, 1920, 8/21 ՅՆվ., էջ 1); հոդված 6-7 (նույն տեղում, թիւ 3732, 1920, 9/22 ՅՆվ., էջ 1); հոդված 8-10 (նույն տեղում, թիւ 3733, 1920, 10/23 ՅՆվ., էջ 2); հոդված 11-15 (նույն տեղում, թիւ 3734, 1920, 11/24 ՅՆվ., էջ 1); հոդված 16-18 (նույն տեղում, թիւ 3735, 1920, 12/25 ՅՆվ., էջ 2); հոդված 19-23 (նույն տեղում, թիւ 3737, 1920, 15/28 ՅՆվ., էջ 1); հոդված 24-33 (նույն տեղում, թիւ 3738, 1920, 16/29 ՅՆվ., էջ 2):

¹⁰⁹ «Ժամանակ», Կ. Պոլիս, թիւ 3738, 1920, 16/29 ՅՆվ., էջ 2:

¹¹⁰ «Ժողովուրդի Ձայնը», Կ. Պոլիս, թիւ 424, 1920, 20 Փետրուար/4 Մարտ, էջ 2:

մեծ ժողովը փոփոխություն կատարեց ապրիլի 15-ի օրենքում, որով արդեն մերժվում էր ոչ մուսուլմանների ցանկացած պահանջ: Նույն տարվա սեպտեմբերին ընդունվեց հերթական օրենքը, որի հողվածներից մեկը բռնագաղթեցված հայերին գրկում էր երկիր մուտք գործելու արտոնագրից¹¹¹: 1926 թ. փետրվարի 2-ին օրենք ընդունվեց առ այն, որ վերադարձի ենթակա չէ 1923 թ. հուլիսի 24-ին կնքված Լոզանի պայմանագրի ուժի մեջ մտնելուց առաջ (1924 թ. օգոստոսի 19-ը) բռնագրավված գույքը: 1927 թ. մայիսին հրապարակվում է կառավարության օրենքը, համաձայն որի՝ Թուրքիայի քաղաքացիություն չէին ստանում նրանք, ովքեր չեն եղել երկրի տարածքում «ազատագրական պայքարի» տարիներին, ինչպես նաև՝ արտասահմանում եղածները՝ 1923 թ. մինչ սույն օրենքի ընդունումը¹¹²: 1931 թ. մարտի 28-ին «Լքյալ գույքի» օրենքների շարքում ընդունվում է վերջինը, ըստ որի՝ «լքյալ գույքը» կարող էր վերադարձվել նախկին սեփականատիրոջ ժառանգներին, եթե ներկայացվեին նրանց իրավունքները հաստատող փաստաթղթերի¹¹³:

1918 թ. զինադադարից հետո քսոտրյալ հայերը փորձում էին վերահաստատվել և պաշտպանել իրենց իրավունքները բռնագրավյալ գույքի նկատմամբ: Նախապես այնպիսի տպավորություն էր ստեղծվում, որ պարտված Օսմանյան կայսրությունը չէր խոչընդոտելու, անգամ նպաստելու էր «օրինական» ձևակերպումներով գույքը տերերին վերադարձնելու գործընթացին: Սակայն այդ «դրական» վերաբերմունքը պահպանվեց մինչև քեմալական ուժերի ի հայտ գալը: Այնուհետև արտաքին հակադրման համատեքստում բռնազավթված տարածքները պահպանելու և օրինական տերերի վերահաստատումը թույլ չտալու համար Կ. Պոլսի կառավարությունը և քեմալականները սկսեցին գործել միասնաբար:

Եզրակացություններում ամփոփվել են կատարված ուսումնասիրության արդյունքները և մեր կողմից արված եզրահանգումները.

1. XIX դարի վերջին և XX դարի սկզբին Օսմանյան կայսրության տնտեսական վերածնունդի համատեքստում շարունակ մեծանում էր Ադանայի նահանգի նշանակությունը: Նահանգի զարգացում ապրող քաղաքներն ու գյուղաքաղաքներն աստիճանաբար իրենց վրա էին կենտրոնացնում ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների ուշադրությունը՝ նահանգը վերածելով առևտրաշրջանառության կարևոր կենտրոնի:

2. Եթե XIX դարի վերջին տնտեսական դաշտում հայերի հաջողությունները «թույլատրելի» էին, ապա տարիների ընթացքում այն կառավարող շրջանակների մոտ լուրջ անհանգստության առիթ է դառնում: Թուրքական իշխանությունների համար պարզ էր, որ երկրի հիմնական տնտեսվարողները եվրոպացիներն են կամ օսմանահպատակ հայերը, հույները և հրեաները, իսկ նոր ասպարեզ մտնող թուրք բուրժուազիան մեծ հաշվով զիջում է նրանց:

3. XX դարի սկզբին՝ աշխարհաքաղաքական լուրջ փոփոխությունների շրջանում, Օսմանյան կայսրությունը գոյատևման ուղիներ էր որոնում՝ դառնալով ավելի ու ավելի անհանդուրժող հպատակ ժողովուրդների նկատմամբ: Հայերին տնտեսապես թուլացնելու, նրանց տնտեսական կարողությունները սահմանափակելու խնդիրը դանդաղ հասունանում էր, իսկ երիտթուրքական հեղաշրջումից հետո՝ աստիճանաբար վերածվում տնտեսությունն ամբողջապես թուրքացնելու ռազմավարական խնդրի: Ադանայի կոտորածն այդ քաղաքականության նախնական դրսևորումն էր, երբ օրերի ընթացքում տասնյակ հազարավոր հայերի սպանվելուն զուգահեռ ոչնչացվեց կամ բռնագրավվեց

¹¹¹ Մարուքյան Ա., Թուրքական պետության կողմից ցեղասպանության ընթացքում..., էջ 45-49:

¹¹² Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 33:

¹¹³ Մարուքյան Ա., Թուրքական պետության կողմից ցեղասպանության ընթացքում..., էջ 56-57:

հայապատկան մեծ կապիտալ, ինչպես նաև տեղի ունեցան մեծածավալ հողային գրավումներ: Ադանայի հայերի տնտեսության ղնչացումը ոչ միայն լուրջ հնարավորություններ էր ստեղծում նահանգի թուրքերի և մյուս մուսուլմանների համար, այլև խաթարում էր Արևմտյան Հայաստանից և կայսրության այլ նահանգներից արտագնա աշխատանքի եկող հայերի հոսքը: Դրա հետևանքով ավելանալու էր Արևմտյան Հայաստանում և կայսրության այլ վայրերում հայերի հողերի ու կալվածքների գրավադրման գործընթացը, իսկ հողերից զրկվելու պարագայում առաջ էր գալու վերջիններիս արտագաղթելու հեռանկարը:

4. 1909 թ. Ադանայի կոտորածից հետո օսմանյան իշխանությունները փորձարկեցին զանգվածային կոտորածների պատասխանատվությունից խուսափելու և կատարվածում հենց զոհերին մեղադրելու մեխանիզմները ևս: Հայերին համակարգված կոտորելուց հետո, նրանց մեղադրեցին սադրելու, անկարգություններ հրահրելու, խժոժություններ կազմակերպելու մեջ, ինչը պակաս կարևոր հանգամանք չէր արդարանալու, պատասխանատվությունից խուսափելու, ինչպես նաև՝ փաստերը խեղաթյուրելու համար:

5. 1910-1914 թթ. ընթացքում բարեգործական տարբեր կառույցների օժանդակությամբ և տեղի ազգային իշխանությունների ու ձեռնարկատերերի ջանքերով նահանգի հայության ընկերային-տնտեսական վիճակը մասամբ հնարավոր է դառնում վերականգնել: Հաղթահարելով մեծ դժվարություններ՝ կիլիկիահայերն անգամ գրանցում են տնտեսական ձեռքբերումներ, որոնք արդեն յուրացվում են Առաջին աշխարհամարտի տարիներին: Թուրքական իշխանությունները, կողոպտելով և բռնագրավելով հայերի կապիտալը, ոչ միայն հսկայական հարստություն ձեռք բերեցին, այլև շարունակեցին օգտվել հայերի կատարած ներդրումներից՝ դրանք ծառայեցնելով իրենց հետագա տնտեսական առաջընթացին:

6. Առաջին աշխարհամարտի հենց սկզբին օսմանյան իշխանություններն օրենքի բազմաթիվ խախտումներով ընդունեցին Տեղահանության և «Լքյալ գույքի» մասին ժամանակավոր օրենքները, որոնք ոչ այլ ինչ էին, եթե ոչ հայերի բնաջնջման և ունեզրկման ընթացող գործընթացը «օրինականացնելու» մեխանիզմներ: Պետության կողմից կազմված «Լքյալ գույքի» ճշգրիտ ձևակերպմամբ՝ բռնագրավյալ գույքի հանձնաժողովները «օրինական» ձևակերպումների շղարշի ներքո պարզապես ցուցակագրում էին հայապատկան կապիտալը՝ ստեղծելով որոշակի տվյալների բազա: Գրանցումները կատարվում էին հայկական ունեցվածքի հստակ տեղագրումն ու ծավալները ձեռքի տակ ունենալու համար:

Այս առումով անհրաժեշտ ենք համարում նշել, որ օսմանյան իշխանությունների կողմից շրջանառության մեջ դրված «լքյալ գույք» եզրույթը (թեկուզև՝ չակերտավոր կիրառությամբ) հետևավոր է փոխարինել ճշգրիտ՝ «բռնագրավյալ գույք» ձևակերպմամբ, և դադարել հետևել Հայոց ցեղասպանության իրագործմանը զուգահեռ հանցագործությունը կոծկող և ժխտող եզրույթաբանությունը:

7. 1918 թ. զինադադարից հետո Ադանայի նահանգ վերադարձած քսորյալ հայերը փորձեցին հետ ստանալ իրենց բռնագրավված ունեցվածքը: Սկզբնական շրջանում, թերևս միայն քարոզչական նպատակներից ելնելով՝ պարտված Օսմանյան կայսրությունը բռնագրավյալ գույքը վերադարձնելու օրենքի նախագծեր էր քննարկում, անգամ ընդունում: Սակայն իրավիճակի փոփոխությանը զուգահեռ՝ օսմանյան իշխանությունները, այնուհետև՝ քեմալական վարչակարգը, բռնագրավյալ անշարժ և շարժական կապիտալի վերաբերյալ ընդունեցին օրենքներ, որոնք ավելի չեզոքացրին հայերի ունեցվածքը հետ ստանալու ամենաչնչին հնարավորությունները և օրենքի ուժով ամրապնդեցին պետական ամենաբարձր մակարդակով իրականացված կողոպուտը: Իսկ շարունակվող ցեղասպանությունը հանգեցրեց Կիլիկիայի կրկնակի ու ամբողջական հայաթափմանը:

Ատենախոսության թեմայով հեղինակի գիտական հրապարակումները

1. Ոսկանյան Ա., Ադանայի նահանգի հայերի տնտեսական վիճակը. 1909 թ. ունեցրկում, գիրք Ա, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2017, 208 էջ + 24 էջ ներդիր:
2. Ոսկանյան Ա., 1909 թ. Ադանայի ջարդերին թուրքական բանակի մասնակցության հարցի շուրջ, ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, «Ցեղասպանագիտական հանդես», 1(1), Երևան, 2013, էջ 142-147:
3. Ոսկանյան Ա., Օսմանյան իշխանությունների կողմից Ադանայի նահանգի հայերի հողագրկման քաղաքականությունը 1910-1914 թթ., ԵՊՀ, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, «Հայագիտության հարցեր», 3 (24), Երևան, ԵՊՀ հրատ., 2021, էջ 50-58:
4. Ոսկանյան Ա., Աքսորյալ հայերի վերադարձը հետպատերազմյան Ադանայի նահանգ. Բռնագրավյալ գույքերի խնդիրը, ԵՊՀ, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, «Հայագիտության հարցեր», 1 (25), Երևան, ԵՊՀ հրատ., 2022, էջ 82-94:
5. Ոսկանյան Ա., Ադանայի նահանգի հայերի տնտեսության վերականգնման փորձերը 1910-1914 թթ., Մատենադարան, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ, «Բանբեր Մատենադարանի», 33, Երևան, 2022, էջ 55-66:
6. Ոսկանյան Ա., Ադանայի նահանգի Չորք-Մարզպան գավառակի տնտեսական առանձնահատկությունների շուրջ, ԵՊՀ, «Արևելագիտության հարցեր», N 21, Երևան, ԵՊՀ հրատ., 2022, էջ 224-238:
7. Ոսկանյան Ա., Ադանայի նահանգի հայերի 1915 թ. բնաջնջումը և ունեցրկումը, «Պատմաբանասիրական հանդես», թիվ 2 (223), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2023, էջ 65-79:

РЕЗНЯ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ ПРОВИНЦИИ АДАНА И КОНФИСКАЦИЯ
ИМУЩЕСТВА АРМЯН В 1909–1918 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 24 сентября 2024 г. в 14⁰⁰ часов на заседании Специализированного совета по Истории Армении 004 КВОН РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

В конце XIX – начале XX в. в условиях экономических реформ в Османской империи продолжало возрастать значение провинции Адана. Развивающиеся города и поселки провинции постепенно привлекали внимание как местных, так и иностранных инвесторов, превратив ее в важный центр торговли. Если успехи армян в экономической сфере в конце XIX в. были «допустимыми» для турецких властей, то с годами они стали поводом для серьезной обеспокоенности правящей элиты. Для турецких властей было очевидно, что основными предпринимателями страны являлись европейцы или османские армяне, греки и евреи, а недавно возникшая турецкая буржуазия уступала им по многим параметрам.

В начале XX в., в период серьезных геополитических перемен, Османская империя искала пути выживания, становясь все более нетерпимой по отношению к подвластным народам. У турецких властей постепенно созрел вопрос экономического ослабления и ликвидации армян, который после младотурецкой революции превратился в стратегию по полной тюркизации экономики империи. Резня в Адане 1909 г. стала первым проявлением этой политики, когда за считанные дни параллельно с истреблением армянского населения уничтожалось или присваивалось принадлежащее им имущество, осуществлялась также масштабная экспроприация земель, что было особенно выгодно как местным, так и центральным властям. Последние, будь то султанская или младотурецкая власть, уже давно проводили политику принудительного вытеснения армян из провинций Западной Армении и других армянонаселенных территорий империи путем конфискации земель. Разрушение экономического потенциала армян Аданы было выгодно турецким властям как с точки зрения нейтрализации армян в экономической жизни империи, что создавало возможности для активизации турок и других мусульман, так и уменьшения потоков армян, приезжающих на заработки из Западной Армении и других провинций империи. Вследствие всего этого, в Западной Армении и других армянонаселенных территориях империи усилился процесс передачи земель и поместий армян под залог, а в случае лишения земли возникла угроза вынужденной эмиграции армянского населения.

После резни армян в Адане османские власти путем обвинения в произошедшем самих жертв впервые испробовали методы ухода от ответственности за массовые

убийства. После спланированных погромов армян власти обвинили последних в подстрекательстве, организации беспорядков, пытаясь таким образом исказить факты и оправдать свои действия.

В 1910–1914 гг. с помощью различных благотворительных структур и усилиями местных национальных властей и предпринимателей было частично восстановлено социально-экономическое положение армян провинции. Преодолев большие трудности, армяне Киликии даже зафиксировали некоторые достижения в экономике, которые были присвоены турецкими властями и мусульманским населением уже в годы Первой мировой войны. Экспроприруя имущество и капитал армян, правительство не только приобрело огромные богатства, но и продолжило извлекать выгоду из инвестиций армян, используя их для дальнейшего экономического роста страны.

В начале Первой мировой войны османские власти приняли временные законы о депортации и об «оставленном имуществе», которые представляли собой некую схему по истреблению армян и конфискации их имущества. На самом же деле, сформированные государством комиссии по конфискации имущества армян под прикрытием «юридических» формулировок составляли списки армянского капитала, создав некую базу данных для уточнения расположения и масштабов армянского имущества.

Считаем необходимым заменить введенный османскими властями в оборот термин «оставленное имущество» (даже если он используется в кавычках), которым искажаются факты и ставится под сомнение преступление, совершенное параллельно Геноциду армян, на отряжающую действительность формулировку – «конфискованное имущество».

В 1918 г. депортированные армяне, вернувшиеся в провинцию Адана после завершения войны, попытались вернуть свое незаконно конфискованное имущество. Изначально, исключительно в пропагандистских целях, побежденная Османская империя обсуждала и даже принимала проекты законов о возврате конфискованного имущества, однако, с учетом изменений геополитической обстановки османские власти, а затем и режим кемалистов, продолжили принятие законов о конфискованном недвижимом и движимом имуществе, которыми еще больше уменьшили шансы армян вернуть свое имущество и узаконили грабёж, осуществленный на высшем, государственном уровне, а продолжающийся турецкими властями политика геноцида привела к повторному и полному изгнанию армян из Киликии.

THE EXTERMINATION OF THE ARMENIAN POPULATION OF ADANA PROVINCE AND THE
CONFISCATION OF THEIR PROPERTY BETWEEN 1909 AND 1918

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of
“History of Armenia” 07.00.01.

The Defense of the Dissertation will be held on September 24, 2024, at 14⁰⁰ at the
Session of the Specialized Council 004 on Armenian History of HESC RA by the Institute of
History of the National Academy of Sciences of RA
(0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

SUMMARY

During the economic reforms carried out in the Ottoman Empire in the late 19th and early 20th centuries, the importance of Adana Province continually increased. The developing towns and large villages of the province kept attracting both local and foreign investors, so the province gradually grew into a significant center of commerce. In the late 19th century, the Armenians were "allowed" to thrive in the economic field, but overtime, their prosperity became a serious cause of concern for the Turkish authorities. They realized that the leading businesses in the country were either in the hands of Europeans or Ottoman Armenians, Greeks, and Jews, while the recently-formed Turkish bourgeoisie did not play any significant role in that sphere.

In the early 20th century, in the face of major geopolitical changes, the Ottoman Empire sought ways to overcome challenges and survive, becoming more and more intolerant towards the subject peoples. The issue of forcing the Armenians into an economic slowdown gradually took priority, while after the revolution carried out by the Young Turks, it grew into a strategy aimed at the complete Turkification of the economy. The massacre in Adana in 1909 was the first manifestation of that policy, as within just several days, the Armenian capital was largely destroyed, and a lot of Armenian lands were appropriated, this being in the interests of both the local and central Turkish authorities. It should be noted that both the sultan's government and the Young Turks exercised the same policy, namely the forced displacement of Armenians from the Armenian provinces of the empire and the places where they formed a large number through the confiscation of their lands. Besides ousting the Armenians from the economy of the province-this would create opportunities for the Turks and the other Muslims-the destruction of the economy in Adana would also prevent the arrival of many Armenians who came to this province from Western Armenia and other parts of the empire as labor migrants. As a result of this, more and more Armenians in Western Armenia and other parts of the empire would have to put their lands and property in pawns, and if they lost all this, they would have to emigrate.

After the massacre of Adana, the Ottoman authorities also tested the mechanism of avoiding responsibility for a large-scale slaughter and blaming victims for that. After a well-

organized massacre of Armenians, the Turkish authorities started blaming them for provocations and disorder, escaping responsibility and falsifying facts in this way.

Between 1910 and 1914, the Armenians of Adana were able to partly improve their social and economic condition thanks to different charity organizations as well as the efforts of the local national authorities and businessmen. Overcoming great hardships, the Armenians of Cilicia even had some economic achievements, but they lost everything during World War I. Plundering the Armenians and confiscating their property, the Turkish authorities acquired a vast fortune; moreover, the investments the Armenians had made before the war were later used by the Turkish Government for the economic progress of the country.

At the beginning of World War I, the Ottoman authorities adopted-with multiple violations of the law-the Laws on Displacement and Abandoned Property, which actually provided a certain mechanism for the perpetration of the extermination of Armenians and the confiscation of their property. In accordance with the Law on Abandoned Property, the committees on confiscated property simply registered the Armenian capital, creating a certain database for the authorities under the veil of "legal" formalizations. In other words, they were compiling lists to have the exact location and scope of the Armenian property.

At this point, we would like to note that it is high time we stopped using the term "abandoned property" (even within quotation marks) that was put into circulation by the Ottoman authorities. It should be replaced with a more accurate one, namely "confiscated property." In this way, we will avoid the use of terms that are aimed at concealing and denying a crime that was committed parallel to the perpetration of the Armenian Genocide.

The displaced Armenians who returned to Adana Province after the armistice of 1918 attempted to regain their confiscated property. Initially, the defeated Ottoman Empire discussed draft laws on returning the confiscated property and even adopted some, perhaps only for propaganda purposes. However, along with the change in the geopolitical situation, the Ottoman authorities and later the Kemalists adopted some laws on the confiscated capital and real estate, which left the Armenians with absolutely no chance to regain their property and legalized the plunder that had been perpetrated at the highest state level. Moreover, the continual genocide policy led to the complete displacement of Armenians from Cilicia.